## ԳԵՎՈՐԳ ԲԱԳՐԱՏԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

*Հայ պատմագիտությունն ու հասարակագիտությունը մեծ կորուստ կրեցին. կյանքի ութսուներորդ տարում վախճանվեց Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ գիտական տեղեկատվության կենտրոնի տնօրեն Գևորգ Բագրատի Ղարիբջանյանը:*



*Գիտնականը ծնվել է 1920 թ. մայիսի 5-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ Բագրատ Ղարիբջանյանի ընտանիքում: Մինչև 1935 թ. սովորել է տեղի գպրոցում, իսկ 1935-1937 թթ. Երևանի Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:*

*Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Գ. Ղարիբջանյանը զորակոչվել է խորհրդային բանակ և մասնակցել Արևմտյան ռազմաճակատում մղված մարտերին: Հայրենական պատերազմի ավարտից հետո ընդունվել է համալսարանի ասպիրանտուրա և 1948 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1955 թ. դոկտորական ատենախոսություններ, վեր հանելով մեր ժողովրդի պատմության համար բախտորոշ մի ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական նկարագրի ծալքերն ու հատկանշական կողմերը՝ պատմագիտական ուրույն և նորովի մոտեցմամբ: Գ. Ղարիբջանյանը միաժամանակ կոմերիտական, կուսակցական և գիտական պատասխանատու աշխատանքներ է վարել, այդ թվում՝ ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, ԽՄԿԿ առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն, ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Ակադեմիայի նախագահության անդամ և 1985 թ. մինչև այժմ գլխավորում էր ԳԱԱ գիտական տեղեկատվության կենտրոնը: Նրա ղեկավարությամբ կենտրոնը իր շոշափելի նպաստն է բերել հայագիտության զարգացմանը՝ հայրենիքում և արտասահմանում գիտական ուղղությունների շփման և փոխազդեցության տեսակետից՝ ի շահ առհասարակ հայագիտության հեղինակության: Ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը մեծ ծառայություններ ուներ գիտական կադրեր պատրաստելու գործում: Ակնառու էր նրա դերը նաև հասարակական գիտությունների հետազոտությունների ուղղությամբ: Գ. Ղարիբջանյանի գրչին են պատկանում շուրջ 400 գիտական աշխատություն և հրապարակախոսական հոդվածներ, մասնավորապես՝ 75 գիրք նոր և նորագույն շրջանի պատմության, հայ ազգային-ազատագրական և հե-*

դափոխական շարժումների, հայոց ցեղասպանության վերաբերյալ: Վերջին տարիներին հրատարակվել են նրա «Հայ ժողովրդի աղատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին», «Ակնարկներ հայ-բուլղարական բարեկամության պատմության», «Ավարայրից մինչև Սարդարապատ», «Ժողովրդական հերոս Անդրանիկ», «Հայոց ցեղասպանությունը և համաշխարհային հասարակայնությունը», «Էջեր հայ ժողովրդի պատմությունից», «Վարք մեծաց», «Վիկտոր Համբարձումյան. Կյանքի և գործի համառոտ ակնարկ» և այլ մենագրություններ, որոնք աչքի են ընկնում ժամանակի իրադարձությունների խոր վերլուծությամբ և լայն ընդհանրացումներով: Հեղինակի աշխատությունները տպագրվել են նաև մի շարք օտար լեզուներով, որը նրան ճանաչում է բերել ազգային շրջանակներից դուրս:

Գ. Ղարիբջանյանը մարտական և աշխատանքային ծառայությունների համար պարգևատրվել է կառավարական 30 շքանշաններով և մեդալներով:

Գևորգ Ղարիբջանյանի անկեղծ ու անմիջական մարդու, հայրենասեր գիտնականի, հասարակական գործչի, բարյացակամ անձնավորության հիշատակը կհարատևի նրա գործերում և իրեն անկեղծորեն գնահատողների շրջանում:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

Երևանի պետական համալսարան

ՀՀ «Գիտելիք» գիտալուսավորչական
ասոցիացիա